

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային
հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին հանձնաժողովի անդամները , ինչպես նաև «Արմավիրի զարգացման կենտրոն » ՀԿ-ի տնօրեն Նաիրա Առաքելյանը, «Ընտանիք և համայնք» ՀԿ-ի նախագահ Քնարիկ Գարանֆիլյանը և «Հույսի Մեծամոր» ՀԿ-ի նախագահ Մարգարիտ Սեդրակյանը:

Օրակարգում՝

1. Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանության ոլորտում Արմավիրի մարզի ՀԿ-ների կողմից 2017թվականին կատարած աշխատանքների ներկայացում:

/Ջեկ՝ Ն. Առաքելյան/

/ Ջեկ՝ Ք. Գարանֆիլյան/

/Ջեկ՝ Մ. Սեդրակյան/

Օրակարգի հարցի հետ կապված սկզբում հանդես եկավ «Արմավիրի զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպության տնօրեն Նաիրա Առաքելյանը: Նա նշեց, որ «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ն 2016թ.-ից սկսել է իրականացնել «Համայնքահեն ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար» եռամյա ծրագրի, որի շրջանակներում 2017թ Արմավիր քաղաքում բացվել է «Արևածագ» երեխաների աջակցության կենտրոնը, որը հաշմանդամություն ունեցող 2-18 տարեկան 82 երեխաների մատուցել է էրգոթերապևտի, լոգոպեդի, արտ թերապևտի, խաղային թերապևտի, սոցիալական աշխատողի, հոգեբանի աջակցություն: Ն. Առաքելյանը նշեց, որ կենտրոնն ունի հարմարեցված մեքենա և շարժական թիմը ծառայություններ է մատուցել նաև գյուղական համայնքներում: Նաև տեղեկացրեց, որ ՀԿ-ի կողմից կազմակերպվել է կենտրոնի 12 շահառու երեխաների 10-օրյա ամառային հանգիստը Ստեփանավանի ճամբարում:

Մարգարիտ Սեդրակյանը ներկայացնելով «Հույսի Մեծամոր» ՀԿ-ի կատարած աշխատանքները՝ ասաց, որ իրենց ՀԿ-ն հունվար-սեպտեմբեր ամիսներին՝ համագործակցելով «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ի հետ մատուցել է ծառայություններ հաշմանդամություն ունեցող և չունեցող թվով 125 երեխաների, որոնցից 38-ը՝ Մեծամոր քաղաքից: Իսկ սեպտեմբեր ամսվանից երեխաները նաև ծառայություն են ստացել Արմավիրում բացված «Արևածագ» նորաբաց կենտրոնում: Կենտրոն հաճախող երեխաները բազմամասնագիտական ծառայություններ են ստացել, ինչպես նաև զուգահեռ կազմակերպվել են դասընթացներ՝ ծնողների համար: Վերջում Մ. Սեդրակյանը ավելացրեց, որ իրենց կազմակերպությունը ակտիվ մասնակցություն է ունեցել նաև սոցիալական ոլորտում իրականացվող բարեփոխումներին ուղղված հանրային քննարկումներին, որտեղ բարձրաձայնվել են հաշմանդամություն ունեցող անձանց հիմնախնդիրները:

Այնուհետև, իր կենտրոնի կատարած աշխատանքները համառոտ ներկայացրեց «Ընտանիք եւ համայնք» ՀԿ-ի նախագահ Քնարիկ Գարանֆիլյանը: Նա ասաց, որ «Ընտանիք եւ համայնք» հասարակական կազմակերպությունը կանխարգելման, ճգնաժամային միջամտության ու վերականգնողական աշխատանքներ է իրականացրել կյանքի դժվար իրավիճակում հայտնված ընտանիքների ու երեխաների հետ: Նրանց հետ աշխատել են հոգեբանը, սոցիալական աշխատողը՝ նպատակ ունենալով աջակցել Մեծամոր քաղաքի և հարակից համայնքների կյանքի դժվար իրավիճակում հայտնված ընտանիքներին և երեխաներին (այդ թվում՝ նաև հաշմանադամություն ունեցող): Կենտրոնը տարեկան սպասարկել է ավելի քան 114 երեխայի, որոնք մասնակցել են կենտրոնում գործող «Արեւածաղիկ» մանկական երգչախմբի, նկարչության, «Փալանչո» տիկնիկային խմբակի պարապմունքներին: Երեխաներին ամեն օր տրամադրվել է սնունդ: «Ընտանիք և համայնք» բարեգործական հասարակական կազմակերպությունը կազմակերպել է կենտրոն հաճախող հաշմանդամ և սոցիալապես անապահով երեխաների նկարերի ցուցահանդես, կենտրոնի երգչախումբը հանդես է եկել մեկ տասնյակից ավելի համերգային ծրագրերով, իսկ թատերախումբը հանդես է եկել տիկնիկային ներկայացումներով:

Ամփոփելով նիստը, տիկին Մուրադյանը շնորհակալություն հայտնեց ՀԿ-ների ղեկավարներին հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառման և իրավունքների պաշտպանության ոլորտում կատարած բազմաձևալ աշխատանքի համար և հույս հայտնեց, որ ՀԿ-ների, պետական կառույցների, ՏԻՄ-երի համագործակցված աշխատանքի արդյունքում հնարավոր կլինի էլ ավելի մեծ հաջողություններ արձանագրել:

Հանձնաժողովի նախագահ՝

Լ.Մուրադյան

Արձանագրող՝ Հ. Հարությունյան